


КРОССЬЯНСКАЯ ПАРТИЗА
ՀԱՅԵՄԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Ս. ԵՇՅՏԵԼ

29

ԻՆՉԴԵՍ ՈւՂՂԵԼ ԹՂԹԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


ԴԱՍԱՆՍՈՍՒԹՅՈՒՆ
ՉՈՐՐՈՐԴ



A $\frac{11}{23718}$ 81432

ԿՈՒՆՏԵՍԱՅԻՆ Ա
ԶՈՐԳԱԴԱՅԻՆ
ՂԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽՍԲԱԳԻՐՆԵՐԻ
ՀԵՌԱԿԱ
ԴԱՍՁՆՈՒՄՆԵՐ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ - Ի
ՉՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937 թ




«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Սույն դասախոսությունը վերաբերում է Երզրային լեզվի մաթ լուրջանը, հստակությունն ու պարզությունը: Հեղինակը նյութն ա-վելի հասկանալի և համոզիչ դարձնելու նպատակով, բազմաթիվ որինակներ է բերել ուսուցիչին լեզվով լույս տեսնող պատի թերթե-րից:

Հաշվի առնելով հայոց լեզվի յուրահատկությունները՝ քարգ-մանությունը ընթացում մի շարք որինակներ փոխարինվել են մեր պատի թերթերից վերցրած որինակներով:

81733
11
A





ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՂՂԵԼԸ

ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒ ԳՈՐԾ Ե

Պատի թերթի խմբկողմ գյուղթղթակցից թղթակցություն է ստացել: Հեղինակի հաղորդած մատուցած հետաքրքրական են և վոչ մի կասկած չկա, վոր ճշմարիտ են: Շատ պատի թերթերի խմբագիրներ կարծում են, թե այդպիսի թղթակցությունը կարելի չէ տպագրել այնպես, ինչպես կա, առանց վորեւէ փոփոխության յենթարկելու, յեթե նույնիսկ գրված է մի քիչ խառն ի խուռն:

Խմբագիրներ ել կան, վորոնք թղթակցությունն ուղղելու գործը վստահում են խմբագրության հետ կապ չունեցող, նույնակ ակնհայտորեն անհուսալի մարդկանց:

— Թղթակցություն ուղղելը, — ասում են նրանք, — տեխնիկական գործ է: Մի քիչ «կիսադժգես» և վերջացավ...

Ճիշտ է արդյոք այդ:

Իհարկե՞ վո՛չ: Մեծ սխալ են գործում այն ընկերները, ովքեր յուրջ ուշադրություն չեն դարձնում պատի թերթի լեզվի վրա, ովքեր անուշադիր վերաբերմունք են ցույց տալիս թղթակցություններն ուղղելու գործին:

Ինչպե՞ս է չարադրած թղթակցությունը, բառերն ինչպե՞ս են դատարարած նրա մեջ և վորքա՞ն հաջող բառեր են ընտրված. ահա, հաճախ սրանից է կախված ամենազլխամորը՝ ընթերցողները կհասկանա՞ն այդ թղթակցությունը, թե՞ վոչ: Դեռ ամէլին:

Յեթե անգրագետ զեղիով գրված թղթակցությունը չի ուղղված, յերբեմն ընթերցողն այդ թղթակցությունից այն չի հասկանում, ինչ ցանկացել են ասել գյուղթղթակիցն ու խմբկողմ: Այդ ցույց տանք որինակով:

«Նաչար» կոլոնտեսության բրիգադիր ընկ. Կործեվը (վորոնե՝ ժի մարդի Պուգորենյան շրջան) հանկարծ, հենց ցանքն սկսելու որերին սկսում է կասկածել իր ուժերին: Նա սկսում է մեկը մյուսի հետեից դիմումներ տալ կորվարչությանը և խնդրել, վոր իրեն ազատեն բրիգադիրի պարտականությունից: Վարչությունը չի համաձայնում: Կործեվը շարունակում է դիմումներ տալ: Յեկ անա, այդ գործով գրադիմում է կոլոնտեսության «Ձա 7—8 միլիարդով պուղով խրբա» պատի թերթը:

Կտամբելով բրիգադիրին, վոր ամենայնուրեւ շրջանում տուղալում է կոլոնտեսության պլանները, հեղինակն իր թղթակցությունն ավարտում է այսպես.

20454

«Բնիկեր կործելով, ստախանովյան ցանքի նախապատրաստման և կատարման շրջանում չպետք է խուճապի մատնվել»:

Խմբկույն այս արտահայտությունը չի ուղղում, այդպես ել արդարև է պատի թերթում: Յեկ աճա, թերթի ասելով դուրս է դալիս, վոր խուճապի մատնվել չի կարելի միայն ցանքը նախապատրաստելու և կատարելու ժամանակ, իսկ ուրիշ ժամանակ, վորպես թե, այդ կարելի չէ: Բայց, իճարկե, վո՛չ գյուղթղթակիցը, վո՛չ խմբկույն այդ չեն ցանկացել ասել: Յերբեք ել խուճապի չպետք է մատնվել:

Հետևապես, չարկավոր և թղթակցությունն այնպես գրել և ուղղել, վոր նրա մեջ յերկզիմի, յերկիմաստ արտահայտություններ չմնան: Այնպես պիտի անել, վոր յուրաքանչյուր թղթակցություն քաղաքականապես ճիշտ լինի, իր բովանդակությամբ լինի պարզ ու հասկանալի՝ յուրաքանչյուր բնթերցողին:

Այն թղթակցությունը, վոր անկարողության, անվութության հետևանքով, կամ չարամտորեն ճիշտ չի ձևակերպած, յերբեմն սղուտի փոխարեն մնաս կարող է հասցնել:

Այս ավելի պարզ լինելու համար մի հասարակ որինակ բերենք: Արդվ-Մեծովյան յերկրամասի Պրոլետարսկի շրջանում «Կրասնի Վոստոկ» անունով մի կոլտնտեսություն կա, վորը կաթնապրանքային Ֆերմա ունի: Գյուղթղթակիցը կոլտնտեսության «Ձա վիտսկի ուրախ» պատի թերթի խմբկույն հանձնեց մի թղթակցություն, վորով հայտնում եր, թե Ֆերմայում գործերը լավ չեն:

«...Շենքն ամիսներով չի մաքրվում, — գրում է նա, — չորթերը քայլելիս նրանց մեջքն առատաղին է քսվում, կեղտոտ են, չսանրված, նիճար: Յեղական անասունների և բնդհանրապես անասունների նկատմամբ վոճ մի տեղ այսպիսի խնամք չեք տեսնի»:

Թղթակցություն այս մասը լավ է գրված, յարդ ու հասկանալի: Հեղինակի խոսքերի մեջ հողատարություն և զգացվում դեպի կոլտնտեսային բարիքը: Խմբկույն ճիշտ է վարվել, վոր այստեղ վոչինչ չի ուղղել:

Բայց աճա, չուղղելով այս թղթակցության շարունակությունը՝ խմբկույն քաղաքական կոպիտ սխալ է գործել, ինչպես այդ ինքներդ ել կտաննեք: Շարունակության մեջ գրված է.

«Պետք է լավ աշխատել, ստանց մտածելու, վոր այդ կոլտնտեսությունն է և այդպիսի խնամքն ել լավական է»:

Մենք համարացած ենք, վոր վոչ թղթակցության հեղինակը, վոչ պատի թերթի խմբկույն չեն ցանկացել ասել, թե կոլտնտեսության ունեցվածքին կարելի չէ և վաս վերարբովել: Բայց, արի տես, վոր չենց այդպես է գուրս յեկել: Վա՛տ, հակահեղափոխական միտք է ստացվել: Յեկ այդ միայն այն պատճառով, վոր չամբկույն չի ունել գյուղթղթակիցին, չի ուղղել թղթակցությունը, չի գրել այնպես, ինչպես ցանկացել է ասել հեղինակը: Յեթե խմբկույն այդ աներ, ապա այդ նախադասությունը կտացվեր այսպես.

«Պետք է լավ աշխատել, կոլտնտեսության քարիքը ավելի լավ պահպանել, քան քո անձնական ունեցվածքն ևս պահպանում»:

Այս բալորից սպարդ ե, վոր պատի թերթի թղթակցութիւնն ուղ-
ղելը, նրա բովանդակութիւնը ճիշտ չարագրելը հասարակ «տեխնի-
կական» դործ է, ալլ կարևոր, քաղաքական, պատասխանատու աշ-
խատանք ե: Այդ աշխատանքը, ինչպես ն պատի թերթի ամբողջ
աշխատանքը բոլորիկյան զղոնութիւն ե պահանջում: Պատահական,
չստուգված մարդկանց չի կարելի հանձնարարել թերթի վորեւ աշ-
խատանքը:



ՄԻՇՏ ՀԻՇԵԼ ԸՆԹԵՐՅՈՂԻՆ

Այնելուդարանություններով ծանրարեւնված, խճողված թղթակցութեան իմաստը դժվար է հասկացվում: Յուրաքանչյուր թղթակցութեան թերթում տեղադրելիս՝ խմբադիրը պետք է նկատի ունենա ընթերցողները հասնելը: Նա նախ և առաջ պետք է հաշիւ առնի, թե արդյոք տվյալ թղթակցութեանը լիովին հասկանալի կլինի ընթերցողին: Ետտ ուղտակար է վերհիշել, թե Վլադիմիր Իլյիչ Լենինն ինչքան մեծ նշանակութեան էր տալիս գրական լեզվի հասկանալիութեանը:

Գերմանացի կին կոմունիստ հանդուցյալ Կլարա Յետկինը պատմում էր, թե մի անգամ ինքը հարցրել է Վլադիմիր Իլյիչին՝ ինչո՞ւ է յե նա միշտ էլ այնքան պարզ և միաժամանակ ղեղեցիկ ու համոզիչ ձևով խոսում: «Գուցե, — հարցրել է Յետկինը, — այդ պատճառով կուրտուրայի յուրահատուկ քննող զի՞ծն է»:

Վլադիմիր Իլյիչը նրան պատասխանել է.

«Այդ յես չդիտեմ: Գիտեմ միայն, վար յերբ յես հանդես էյի դալիս «փորպես հոետոր», միշտ մտածում էյի բանվորների և գյուղացիների մասին՝ փորպես իմ ունկնդիրների մասին: Յես ցանկանում էյի, վոր նրանք հասկանան ինձ: Կոմունիստը, փորտեղ էլ խոսելիս լինի, նա պետք է մտածի մասսաների մասին, պետք է խոսի նրանց համար»:

(ԿԼԱՐԱ ՅԵՏԿԻՆ. Հիշողութեաննր Լենինի մասին. Մարքսի, Էնգելսի ու Լենինի ինտերուտտի և Կուսհրատի հրատարակութեան. 1933 թ., էջ 58):

Ետտ խրատական և խմբադրական այն խոչոր աշխատանքը, վոր կատարվեց «ՌՍՀՄ Քաղաքացիական պատերազմի պատմութեանը» առաջին հատորի վրա: Չնայած նյութերը նախորոք մշակել էյին փորձված ժուռնալիստներ ու գրողներ, բայց և այնպես Գլխավոր խմբադրութեանը, ընկեր Ստալինի ամենամոտ մասնակցութեամբ, այդ հատորի նյութերի մեջ մոտ յոթհարյուր ուղղում ու լրացում մըտցրելի:


Գլխավոր խմբադրութեան ուղղումները յերբեմն այն էյին լինում, վոր նա մի բառը փոխարինում էր մի ուրիշով, կամ ավելացնում էր մի նոր բառ: Սակայն հենց այդ մի բառը ամբողջ հարցը լուսաբանում էր բոլորովին այլ կերպ, հենց այնպես, ինչպես հարկաւոր է լուսաբանել:

Որինակ՝ ընկ. Ի. Մենցը, վոր մասնակցել է այդ գրքի առաջին հատորը կարճելուն, այսպիսի մի դեպք է պատմում.

«Գլուխներէց մեկը պատմում է, թե ինչպես ենթ-մենչե-
փիկները — Չիեիձեն, Սուխանովը և ուրիշները — 1917 թ.
մարտի 2-ի զիշերը գնացին Միլյուկովի ու Ռոձյանկոյի մոտ՝
խոսելու, վոր իշխանութիւնը հանձնվի բուրժուազիային: Այնու-
հետեւ գրված է. «Նիստը վերջացաւ: Պետական դումայի ժամա-
նակավոր կոմիտեն սկսեց կառավարութեան ցուցակ կազմել, իսկ
խորհրդային ներկայացուցիչներն զբաղվեցին զեկլարացիայով:
Մարտի 2-ի լուսարացին նորից հավաքվեցին: Խորհրդային զեկ-
լարացիան Միլյուկովին դուր չեկաւ և նա նստեց, վոր տեղն ու
տեղն ուզի»:

Գլխավոր խմբագրութեանն ուղղեց միայն մի բան. «Խորհրդա-
յին ներկայացուցիչներ»-ի փոխարեն գրեց «Խորհուրդների ներ-
կայացուցիչներ»: Քննութեամբ հասկանալիք ընթեւրցողը «Խորհրդային
պատգամավորութեան», «խորհրդային ներկայացուցիչներ» բառե-
րի հետ, բնականաբար, կապում է պրոլետարիատի գիկտատու-
բան, նկատի յի ունենում բոլշեիկյան Խորհուրդները, իսկ այդ
սովորական հասկացողութեանն այստեղ հանդիպում է տարրինակ
դուրսդիւրութեամբ, բանակցութեաններ Միլյուկովի հետ, բուր-
ժուազիայի հետ՝ իշխանութեանը հանձնելու մասին: Գլխավոր
խմբագրութեան կատարած ուղղումից հետո արդեն տարակուսանք
լինել չի կարող, վորովհետեւ գրանից մի յերկու տող վերեւ Խոր-
հրդի մասին ասված է, վոր այդ ենթ-մենչեիկյան Խորհուրդ
եր»:

(«Ռուսիկի» ժուռնալ 1935 թ. № 21):



ՈՒՂՂԵԼ ԽՆԱՄՔՈՎ, ԱՌԱՆՅ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐԻ

Այսպիսի մի դեպք է յեղել: Վարդշիրովսկի (Հեռավոր Արևելյան
յերկրամաս) Յուզկոմբինատի ստախանովական ընկ. Պիմչենկոն «Չա
սորսյու» պատի թերթի խմբագրին հանձնում է մի թղթակցութիւն:
Ահա թէ ինչ էր գրում նա.

«Յուզկոմբինատում բնակարանի խիստ պակաս է իջացվում:
Չնայած դրան, բնակարանային մասի զեկայարներ ընկ. ընկ.
Ասթամովն ու Ծպորտունը միջոցներ չեն ձեռք առնում կոմբինատի
տներէից փտարելու նրանց, ուրբեր կոմբինատում չեն աշխատում:
Ասթամովն ու Ծպորտունն ինչո՞ւ յեն այդպիսի սիրայիւր վե-
րարեմունք ցույց տայիս դեպի չվող Պոտապկինը»:

Թղթակցութիւնը գրված է պարզ ու հասկանալի: Կարելի չե՛ր
պատի թերթում տեղափոխել թերես աննշան ուղղումներով: Բայց
պատի թերթի խմբագիր ընկ. Որգանովն ուրիշ կերպ է մտածում.

— Եստ է հասարակ լեզվով գրված: Հարկավոր է մի քիչ աշ-
խուժացնել...

Յե՛վ, վորովհետև թղթակցութիւնն աշխուժացում ասելով նա բո-
լորովին սխալ բան էր հասկանում, դրա համար էլ այդ թղթակցու-
թիւնը չուտով նրա զրջի տակ հետեյալ պատկերն է ստանում.

«Մեր մտորակը, ինչպես և մեր կոմբինատը, գերբնակեցված
է: Բայց մենք չափազանց դարձացած ենք, ինչո՞ւ դուք ձեր բան-
վորների համար բնակարան չեք փորձում ձեր տներում... Մարդ
միայն դարձանալ կարող է այդ, թույլ տվեք ասել, մարսեցիների
հեռատեսութեան վրա և հրաժարվել Մարտի վրա բնակարան վո-
րանելուց: Իսկ մարսեցիներն իրենց հերթին...» և այլն:

Շրջանային «Կոմունար» թերթից մենք տեղեկացանք, վոր բան-
վորներին հուզել է իրենց թղթակցութիւնների այսպիսի անիմաստ ու
կոմեյական աղափարումները և նրանք դադարել են թղթակցութիւն
գրել «Չա սորսյու» թերթին:

Իհարկէ, այդ բանթղթակիցները ձիւղ չեն վարվել. վոչ թէ
պետք է ձեռք քաշել թերթին աշխատակցելուց, այլ պետք է միջոց-
ների դիմել, վոր թղթակցութիւնները չաղափարվին: Հարկավոր էր
ընկեր Որգանովին հասկացնել, վոր վերջ տա իր վուչ ու անբովան-
դակ ճանտցներին:

Ճիւղ է, այս ամենը տեղի յե ունեցել վոչ թէ կոլտնեսութիւ-
նում, այլ դործարանում, բայց դրանից խնդրի էլութիւնը չի փոխ-

վում: Յուրաքանչյուր պատի թերթի խմբագիր պետք է դաս անի այդ որինակից և մի անգամ ընդմիջա չիշի, վոր թղթակցությունն ուղղել չի նշանակում կարելի չե նրան ավելացնել ինչ վոր խնդրին փչեց:

Լավ չե, նաև, այնպես անել, ինչպես, որինակ, արել է «Ուղարկել» պատի թերթի խմբագիր ընկ. Ա.Փոնիչևիք (Լենինգրադի մարզի Գոլոդանակի անտառակայան): Ընկ. Ա.Փոնիչևիք կարծում է, թե յուրաքանչյուր թղթակցություն անպայման պետք է մի բարձրագույնը նախարան ունենա:

Յեթև, որինակ, թղթակիցը գրում է, թե իրենց բրկպաղն ինչպես է ցանքին նախադատարատվել, ընկ. Ա.Փոնիչևին անպայման բակրրից ավելացնում է.

«Քորհրդային Միության բոլոր գործարաններում, անտառներում ու կոլտնտեսութուններում լայնորեն ծախարվել է ստախանոսյան շարժումը»:

Յեթև թղթակցություն է ստացվել յուրերի մասին, նա անպայման այսպիսի մի նախարան է ավելացնում.

«Մեր յերկիրն իր գործարաններում, սոցիալիստական դաշտերում հարյուրավոր աշխատանքի հերոսներ ունի: Բայց դեռ կան լողեր, ինչպիսիք են Մարկովը և Պրոխորովը»:

Գյուղթղթակցին իր թղթակցության մեջ մերկացնում է մի գող: Թվում է, թե շատ պարզ ու հասկանալի չե: Բայց մո՛չ: Այդ թղթակցությունը պատի թերթում տեղափոխելու փոխարեն «Ուղարկել»-ի խմբագիրը հետից է գրույց սկսում իր ընթերցողի հետ.

«Մենք կառուցում ենք սոցիալիզմ, վորտեղ մարդիկ պետք է գիտակից լինեն: Սակայն, չնայած դրան, մեր անտառակայանում կան անդիտակից մարդիկ, վորոնք թալանում են սոցիալիստական սեփականութունը»:

Յեթև ի՞նչ է ստացվում: Լողերին թերթը նախատում է, վոր նրանք աշխատանքի հերոս չեն, իսկ գողությունը բացատրում է անգիտակցությամբ... Դե, ինչի՞ չե նման այս:

Չի հարկավոր յերկար ու բարակ նախարան գրել յուրաքանչյուր թղթակցության: Չեր կոլտնտեսական ընթերցողներին այդ ընդհանուր բաները վաճ մի նոր բան չեն տա, իսկ այդպիսի նախարանները, ինչպես անհնում եք, կարող են փչացնել թղթակցությունը:

Իսկ ի՞նչ կարելի չե, յերբեմն ել նույնիսկ անհրաժեշտ է, ավելացնել թղթակցությունն ուղղելիս:

Գործնական քաղաքական նախարան թղթակցությանը:

Ճիշտ յեղրակցություն՝ նկարագրած փաստերից: Գործնական առաջարկություն: Շնորհալի արտահայտություն՝ թղթակցությունն սոցիալաժանելու համար՝ մի լավ առակ:

Սրանք ողուս կտան: Սրանց դեմ թղթակիցն էլ չի առարկի:

Թղթակցությունը պետք է ուղղել միայն անհրաժեշտագույն չափով, պահպանելով հեղինակի վննի առանձնահատկությունը, խնամքով վերաբերվելով մտքերն արտահայտելու նրա ձևերի հետ:

Այդպիսի ուշադիր վերաբերմունքի որինակ ենք տեսնում «Չա

աւրօստելատիո» սրտի թեւթում (Լենինգրադի մարզի Գեւորյանի շրջանի 2-րդ Ոստյեկի կոյնտեսութեան): Այդ թերթում յարաբանջուր հեղինակ ընթերցողների հետ խոսում է իր լեզվով:

Դրանից թերթը դառնում է շատ յարահասու, կենդանի ու հետաքրքիր:

«ՄԱՐԴՈՒ ԶԶՎԱՆՔ Ե ԳԱԼԻՍ

Կի՛տր նատալիա Յեֆիմովնան կովերը կի՛նում է կանոնավոր կաթը ժամանակին հանձնում է Ֆերմա: Բայց, յեթև տանևր, թե ինչի մեջ է կի՛նում... իսկական կորոնտեսականը ձրի էլ չի փերցնի այդ կաթը: Նրա կովկիթն ուղղակի կեղտաձրի դուլլ է:

Անանարում Նեխոյեկին էլ, կոյնտեսութեան նախագահ Յակովլեյն էլ, գիտեն ալ: Բայց նրանք ալդ կաթը չեն ուտում, դրա համար էլ դրա մասին չեն մտածում:

Գլուզիթղթակից Անդրեյեվ»:

Ինչո՞վ է լավ այս թղթակցութեանը: Նախ և առաջ իր պարզութեամբ ու հասկանալիութեամբ: Լեզվի յարահասուութեամբ, վորը ուղղելու ժամանակ չի փշաքրվել:

Նույնպիսի արժանիքներ ունի նույն թերթից վերցրած հետևյալ թղթակցութեանը.

«ՄԱՐԴՈՒ ՔԵՖՆ Ե ԳԱԼԻՍ

Մարդու քեֆն է դալիս, յերը նայում էս անասնադահ Իվանովի ձրուն: Նա միջակից ավելի գեր է: Մաղերը փայլում են հայելու պես: Յեվ ինչո՞ւ պիտի վատ լինի ալդ ձին, քանի վոր Իվանովը սիրում է նրան:

Գո՞մում նա ջրաման ունի: Կերամանը լափն է, խոտը վտոքի տակ չի թափում: Վորոչակի ժամերին նա ջրում է իր ձրուն, ամեն որ մաքրում է նրան և շափից ավելի չի բնանում:

Մյուս կոյնտեսականները պետք է Իվանովից ստորեն ձի պահել:

Ստուգող հանձնաժողով՝

Ֆ. Իվանով և Ն. Ֆեդորով»:

Դժվար չե նկատել, վոր այս թղթակցութեանը ևս համեմատում է կենդանի արտահայտութեաններով ու համեմատութեաններով, ինչպես սրինակ՝ «մաղերը փայլում են հայելու պես»: Յեթև խմբապարտեանն սկսեր անտեղի ուղղումներ անել, դրանով միայն կիչաղներ թղթակցութեանը:

Միշտ պետք է հիշել, վոր գանադան հեղինակներին հատուկ հետաքրքրական արտահայտութեանները շատ են աշխուժացնում թերթը:

Նաղեթդա կոնտանտինովնա կրուպկայան պատմում է, թե Լենինն ինչպես էր ուղղում թղթակցութեանները.

«Բանտարական թղթակցութեանները նորից ու նորից էլին կարգացվում: Սովորաբար նրանք գրվում էլին այն յարահասու լեզվով, վորով խոսում էր այն ժամանակ բանտարների առաջավոր խավը: Նրանց լեզվի մեջ նոր բառեր ու տերմիններ շատ կային, բայց դրանք հաճախ գործածվում էլին յարահասու լեզանդա-

վորումով, հաճախ, սխալ, անճիշտ ձևով: Հարկավոր էր ուղղել
այդ բանօրական թղթակցությունները: Վարդևա՛խը Իւլիշը շատ
հողատար էր դեպի այդ դործը: Եւ շատ էր հոգ տանում, վոր
պահպանվի թղթակցության վողին, վոճը, յուրահատկությունը,
վոր նրանք չարժեքադրելեն, չափից ավելի ինտելիգենտական
չդասնան, պահպանեն իրենց դեմքը»:

(Ն- կր ՈՒՊՍԿԱՅՍ. «Լեհինը կուսակցական մամուլի խմբագիր ու
կազմակերպիչ»):

Մենք բոլորս պետք է սովորենք այդպիսի զգուշ ու հողատար
վերաբերմունք ունենալ դեպի յուրաքանչյուր թղթակցությունը:



ԼԱՎ, ՄԱՔՈՒՐ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՀԱՄԱՐ

Ինչպես արդեն վերն ասացինք, զոչ մի դեպքում չպետք է ընկնել մյուս ծայրահեղութեան մեջ, այսինքն՝ բոլորովին չուղղել թրջթակցութեանը, թողնել այնպես, ինչպես թղթակիցը գրել է :

Ամեն անգամ չի կարելի հույս դնել, թե թղթակցութեանը, կարծես, դրված է հարթ, սահուն: Նախքան թղթակցութեանը պատի թերթում տեղավորելը պետք է լավ կշռադատել նրա յուրաքանչյուր արտահայտութեանը :

Կիրովի անվան գյուղատնտեսական արտելի կոլտնտեսականները (Վորոնեժի մարզի Գրեղեննի շրջան) մի անգամ շատ կուշտ ծիծաղեցին իրենց «Նաչա ժիզն» պատի թերթի խմբակի վրա: Ինչո՞ւ ծիծաղեցին: Վորովհետև խմբակուրը գլխի չէր ընկել և մի թղթակցութեան մեջ չէր ուղղել հետևյալ անհեթեթութեանը:

«Շուրջը խաղաղ էր, բայց վտոնում էր բուրբ»...

Հեղինակը պարզապես ճոճուցքել է: Ինչպես յերևում է, նա այն մարդկանցից է յեղել, վորոնց մասին ասված է, թե՛ «զեղեցիկ խոսքի համար իրենց հորն ու մորն ել չեն խնայել»: Իսկ խմբակուրը չի ուղղել թղթակցութեանը, չի մաքրել այնտեղ յեղած անհեթեթութեանները և ինքն իրեն ծիծաղելի դրութեան մեջ է գրել:

Բայց այս բոլորը չէ: Թղթակցութեան մեջ խոսվում է ձխապան Պոպովի մասին, նա զիջելները թապուն, կոլտնտեսութեան ձիերով, իր սեփական բանջարանոցն է տանում գոմի աղբը: Հեղինակը թղթակցութեան վերնադիրը գրել է «Անդիտակիցը»: Խմբակուրն աղղպես էլ թողել է: Բայց, մի մտածեցեք, դա ի՞նչ անդիտակից է: Ուղղակի գող է, խարդախ: Աղղպես էլ պետք էր վերնադիր գրվեր: Աղղպես էլ պետք է ուղղվեր:

Թղթակցութեանները պետք է ուղղել խնամքով, հարգելով հեղինակին ու ընթերցողներին, վորոնց ձանձրացնում է թերթը, յեթե բոլոր թղթակցութեանները սանրված են մի սանրով:

Ուղղելու ժամանակ, առանց հեղինակի լեզուն աղճատելու, պետք է թղթակցութեանից դուրս նետել բոլոր կոպիտ ու հայհոյական արտահայտութեանները: Բացի ընթերցողների կշռամբանքից՝ ուրիշ մի մի բանի չի արժանացել, որինակ, Կամենսկի փայտադործարանի «Պիլա» թերթը, վորը թղթակցութեան մեջ պահել է հայհոյական բաները:

Ինքն իրեն ավելի անհարժար դրութեան մեջ է գրել Վորոչիլովի

անյան «Նովի սլուտ» կորանտեսության պատի թերթի խմբիւրը (Վո-
րոնեթի մարզի Լազոմիրովսկի շրջ.): Այդ պատահել է հետևյալ
կերպ.

Գյուղթղթակից ընկ. Շտանկոն մի հետաքրքիր ու շահեկան թղթ-
թակցութիւն է գրել հայհոյանքի դեմ պայքարելու մասին: Քմբկո-
ւր թերթում տեղափոխել է այդ թղթակցութիւնը: Յետ ամեն ինչ լազ
կլինեք, յեթե... խմբիւրը թղթակցութիւն մեջ չափեցանքեր այդ
հայհոյանքի բառերը:

— Այս ի՞նչ բան է, — հուզվեցին կորանտեսական ընթերցողնե-
րը, — համոզում են չհայհոյել, բայց հենց իրենք ել թերթում կրքի-
նում են ամեն տեսակ հայհոյանքներ...

Բայց հարցը միայն հայհոյանքները չեն: Անձեռնմխելի թողնելով
յուրահատուկ ժողովրդական արտահայտութիւնները, առակները, ա-
ռածները, միաժամանակ պետք է անողորքաբար դուրս չարտել թղթակ-
ցութիւններից մեր լեզվին խորթ բոլոր բառերը:

Պատի թերթի լեզուն չպետք է աղտոտել նաև տեղական, մոշ գը-
բաղետ բարբառային սխալ ձևերով ու բառերով, ինչպես որինակ՝
«գայում եմ», «հորի», «ինչըլի» և այլն: Կան անաղայակ խմբագիր-
ներ, մորոնք պատի թերթում այդպիսի բառեր տեղափոխելով, կար-
ծում են, թե այդ է ժողովրդական լեզուն:

Պետք է հիշել, մոր պատի թերթը պարտավոր է իր ընթերցողին
շլրական, կոլտուրական լեզու սովորեցնել:

Պատի թերթի լեզուն պետք է լինի լավ, մաքուր, բոլոր ընթեր-
ցողներին մատչելի, խոսկական ժողովրդական լեզու:

Ամենայայտնիք է Նույնիսկ ամենաբարդ հարցերի մասին ել կարելի
է և պետք է գրել պարզ, հասկանալի լեզվով: Այդպիսի հիանալի գը-
բախոր ու բանավոր խոսքի որինակներ է տալիս մեզ ընկեր Ստայինն
իր յուրաքանչյուր խոսքով: Վերջենք թեկուզ այս հատվածը՝
նրա հիանալի գեկուցումից, մոր տվեց Քորհուրդների համաժու-
կան VIII արտակարգ համագումարում:

«...Մեր խորհրդային գյուղացիութիւնը միանդամայն նոր
գյուղացիութիւն է: Մենք այլևս չունենք կալվածատերեր ու կու-
լակներ, վաճառականներ ու վաշխատուներ, մորոնք կարողանա-
լին չահագործել գյուղացիներին: Հետևաբար, մեր գյուղացիու-
թիւնը չահագործումից ազատագրված գյուղացիութիւն է: Այ-
նուհետև, մեր խորհրդային գյուղացիութիւնն իր ճշտող մեծա-
մասնութիւնը կորանտեսային գյուղացիութիւն է, այսինքն՝ նա
իր աշխատանքը և իր ստացվածքը հիմնում է մոշ թե անհատա-
կան աշխատանքի ու հետամնաց տեխնիկայի վրա, այլ կոլեկտիվ
աշխատանքի և արդի տեխնիկայի վրա: Վերջապես, մեր գյուղա-
ցիութիւնն անտեսութիւնն հիմքում դանդում է մոշ թե մասնավոր
սեփականութիւնը, այլ կոլեկտիվ սեփականութիւնը, մորն ա-
ճել է կոլեկտիվ աշխատանքի բարդի վրա:

Ինչպես տեսնում էք, խորհրդային գյուղացիութիւնը դա
միանդամայն նոր գյուղացիութիւն է, մորի նմանը դեռ չի խմա-
ցել մարդկութիւնն պատմութիւնը»:

Այստեղ վերլուծած և մի շատ լուրջ հարց. արված և պատմական մի խոչորագույն յերկվույթի բնորոշումը: Բայց վորքա՛ն պարզ ու հասկանալի յե ստված այս ամենը: Մենք բոլորս այդ պետք և սովորենք ու սովորենք ընկեր Ստալինից:

Թղթակցությունն ուղղելիս խելքին դու տալու կարելք չկա: Վորքան հասկանալի գրված լինի թղթակցությունը՝ այնքան լավ: Մենք, որինակ, շատ լավն ենք համարում հետևյալ թղթակցությունը.

«ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆ ԿՈՒՆՏՏԵՍԱԿԱՆԸ

Այս բերքահավաքի ընթացքում կոլտնտեսական Ա. Ի. Չեռնոկովն իսկապես վոր ստախանովարար աշխատեց:

Նա կարողացավ հնձելու տեխնիկային այնպես տիրապետել, վոր արտադրանքի նորմաները կրկնակի չափով գերակատարում էր: 19 որում նա հնձեց 152 հեկտար: Կոլտնտեսականների ընդհանուր ժողովում, վորտեղ քննվում էր ստախանովականների խորհրդակցությանն ընկեր Ստալինի արտասանած ճառը, Չեռնոկովը խոսք տվեց յեկող տարի որական 8 հեկտարի փոխարեն 10—12 հեկտար հնձել:

Վողջունում ենք ստախանովական կոլտնտեսականին»:

(Վորոնեժի շրջանի Սոսեդսկի շրջանի Բուդյոննու անվան կոլտնտեսության «Ուգարնիկ» պատի քեքքից):

Յեթե մի ժամանակ ցարական չինովնիկներն ու գրադիները տարածել էլին այն արտահայտությունը, թե՛ «Սոսում և այնպես, ինչպես գրում և», ապա մենք, ընդհակառակը, պետք և աշխատենք գրել այնպես, ինչպես խոսում են մարտը-գրական, ժողովրդական, կենդանի լեզվով: Իսկ մեր լեզուն շատ հարուստ և, նա յուրաքանչյուր միտք արտահայտելու համար շատ ու շատ գեղեցիկ, պատկերավոր ձևեր ունի:

Իդուր չե, վոր, ինչպես ընկ. Բոնչ-Բրուեվիչն և վկայում, Լենինը վրդավիվում էր, յերբ կարգում էր անշնորհք շարադրված մի փաստաթուղթ կամ հոգված:


«Յեթե նա տեսնում էր, վոր շարադրանքի մեջ հանրամատչելիություն չկա, միշտ հարց էր տալիս. «Միթե՞ դուք չեք կարող ձեր մտքերը ուստաց լեզվով այնպես շարադրել, վոր իրոք մտտչելի լինեն բոլորին: Ուստաց լեզուն շատ հարուստ է: Յեթե դուք այդ չեք անում, ապա մեղավոր եք ինքներդ և վորչ այն լեզուն, վորով գրում եք»: Յեվ նա պահանջում էր յուրաքանչյուրից, և վորքան ընկերն ավելի պատասխանատու յեր լինում, այնքան ավելի խիստ էր պահանջում, վոր հեղինակը խնամքով կատարի իր աշխատանքը՝ հասնելով ատավերագույն պարզության: Նա տանել չէր կարողանում մեզ մոտ յուրացված լրագրային լեզուն, վոր հաճախ այնքան աղքատ, դժվար, տխուր ու անհասկանալի յեր լինում, վոր Վլադիմիր Իլյիչը շատ անգամ լրագիր կարդալիս բացականչում էր. «Ի՞նչ լեզվով և գրված այս: Միթո՞նեք են

և կարծես: Վարայուկ¹ և ն փոչ թե Տոլստոյի ու Տուրգենևի² լե-
զան»:

(Վ. ԲՈՆԶ—ԲՐՈՒՆՎԻԶ. «Խճշարն էր աշխատում Վրացիներ իլիշը»,
ժողովայն «Չիտաւելի ի Պիտաւել» № 2, 1928 թ.):

Ինքը՝ Ղենինը հիանալի խմբագիր էր և սքանչելի յեր զրում: Ըն-
կեր Ստալինի շէշտակի գիտողությամբ «միայն Ղենինն էր կարողա-
նում ամենախճճփած հարցերի մասին զրել այնքան պարզ ու հասկա-
նալի, սեղմ ու համարձակ, — յերր յուրաքանչյուր Քրազը փոչ թե
խոտում է, այլ կրակում» («Ղենինի մասին» գրքուլիկ, Կուսհրատ,
1937 թ., էջ 26):

Ուրեմն ի՞նչ պահանջներ էր առջադրում Ղենինը լրագրային լեզ-
վին: Հետևապես, յուրաքանչյուր խմբից ի՞նչ ակներե կանոններ
պետք է կիրառի թղթակցությունն ուղղելիս:



1) Վարայուկ՝ Տիջագրային լեզվի անուն:

2) Որև խոչորագույն գրողներ, փորձք լեզվին վարպետրեն տիրա-
պետելու որինակներ են թողել:

ՄԻՔ ԶԱՐԱՇԱԿԻ ՈՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

«Մեր կյանքը» պատի թերթում (Վորոնեժի մարզի Զերժնակու շրջանի Կիրովի անվան կոլտնտեսություն) մի անգամ կոլտնտեսության արտադրական պլանի մասին մի թղթակցություն էր ստված: Երա մեջ ի միջի այլոց ասված էր.

«Մենք պետք է յուրաքանչյուր կետին մոտենանք մանրամասնորեն, սպասկար գործողության կոնֆլիկտներով»:

Ինչ կարող է նշանակել այս՝ կոլտնտեսականներից վոչ մեկը չհասկացավ: Յեւ, յեթե ճիշտ ասենք, հասկանալի դրանից շատ բան չեն հասկացել նաև վոչ ինքը՝ հեղինակը, վոչ էլ խմբադրական կոլեկտիվը:

Վլադիմիր Իլյիչ Լենինը շատ անգամ է դեմ գուրս յեկել մամուլում անտեղի կերպով ոտար բառեր գործածելուն: Դեռևս հեղափոխությունից առաջ նա գրում էր, վոր բոլշևիկները

«...պետք է կարողանան խոսել պարզ ու հասկանալի, մաստային մատչելի լեզվով, վճռականորեն դեն նետելով զժպար հասկանալի տերմինների, ոտար բառերի ծանր հրետանին, վորոնք սերտված, պատրաստ են, բայց դեռևս անհասկանալի յեն մաստային, դեն նետելով նրան անձանոթ լոզունգները, բնորոշումները, յեղրակացությունները»:

(Լենին. Յերկիր, հատոր X, էջ 143—144):

Հսկումները յայն սոցիալիստական Մեծ հեղափոխությունից հետո Լենինն իր «Ռուսաց լեզուն մաքրելու մասին» հոդվածում գրում է.

«Մենք ուսաց լեզուն փչացնում ենք: Ոտար բառերը գործ ենք ածում ատանց անհրաժեշտության: Գործ ենք ածում անճիշտ: Ինչո՞ւ ասել «գեֆեկաներ», յերբ յերբ կարելի յե ասել թե բուրժուաներ, պակասություններ, կամ արատներ»:

Իհարկե, յերբ հենց նոր միայն կարգալ սոյորած է մանտվանդ թերթ կարգալ սոյորած մարդը սկսում է ջանասիրարար թերթեր կարգալ, նա ակամայից յուրացնում է լեզվի լրադրալին արտահայտությունները: Բայց հենց լրադրալին լեզուն էլ մեկ մոտ նույնպես սկսում է փչանալ: Յեթե նոր միայն կարգալ սոյորած մարդուն ներելի յե վորպես սկանակի ոտար բառեր գործածելը, ապա դրականագեաներին այդ ներել չի կարելի: Ժամանակը չէ՞ արդյոք, վոր մենք կոլիվ հայտարարենք ատանց անհրաժեշտության ոտար բառեր գործածելու դեմ»:

(Լենին. Յերկիր, հատ. XXIV, էջ 702):

Հասկանալի չե, զոր Անհինը նկատի չուներ այնպիսի հանրահայտ-
նի, վաղուց արդեն դորձածութեան մեջ մտած բառերը, ինչպիսիք են՝
«այլոսմորիլ», «արակտոր», «ամիացիա» և այլն: Այստեղ նա նկատի
ունենք ընթերցող մտասային իրոք անհասկանալի բառերը: Ահա հենց
այդ բառերն է, զոր պետք է փոխարինել մեր լեզվի նույնանիչ բառե-
րով:

Այն դեպքում, յերբ դյուղթղթակիցը, կամ խմբագիրն անհրա-
ժեշտ են համարում դորձածել զո՛չ բոլոր ընթերցողներին հասկանալի
ոտար բառ, ապա այդ դեպքում նլ պետք է վարվել այնպես, ինչպես
հաճախ անում եր Վլադիմիր Իլյիչը: Նա տեղն ու տեղը բացատրում
եր այդ բառը կամ փակադձերում և կամ հենց այդ ոտար բառի կող-
քին դնելով ոտներեն բառ, միացնելով «այսինքն» արտահայտու-
թյամբ:

Հենց այդպես ել, միանգամայն ճիշտ և վարվում «Պորեկա» պա-
տի թերթի խմբիցը (Վերոնիկի մարդի Ստեղակի չրժանի Ստայինի
անվան կոլտնտեսութուն): Այդ թերթը մի լողրի եզոխտ անվանե-
լով տեղն ու տեղը բացատրում է.

«Եզոխտ է կոչվում այն մարդը, զոր ապրում է միայն ինքն
իր անձի հոտար և հաջի չի առնում հասարակական շահերը»:
Յեւ շատ լավ է արել թերթը:



A 23718 20454
II 81332



ԽՈՒՍԱՓԵՑԵՔ ԿՐՃԱՏ ԲԱՌԵՐԻՑ

Մի շարք պատի թերթերի խմբադիրներ կրճատ բառերի գործածութեանն աշխտես են շարաշահում, վոր ընթերցողները, բառիս խական իմաստով, սորոված են լինում յենթադրութեամբ հասկանալ թղթակցութեան բովանդակութեանը:

Էնինը ծագում էր անհրաժեշտութեանից չրդիտղ ամեն մի կրճատում:

Բառերի՝ մասաներին անհասկանալի կրճատումներին բացասաբար և վերաբերում նաև ընկեր Ստալինը: Համաժխտթեանական Կոմունիստական կուսակցութեան XVII համագումարում ընկ. Լ. Մ. Կազանովիչը զրա մասին ասում էր.

«Ընկեր Ստալինը հաճախ կշտամբում և զրականապետներին ու մեր լրագրերին, վոր նրանք հաշվի չառնելով լայն մասաների մակարդակը, գործ են անում ամեն անասկ կրճատված բառեր: Ահա վասիկ որինակ, զրում են միջադպարին պատանեկական որվա մասին, և անպայման կտեսնեք՝ ՄՅՈՒԴ»:

Մենք ընկեր Շուխինին կենտկոմի գլուցատնտեսական բաժնից գլուց ուղարկեցինք, վորպեսզի նա ուսումնասիրի, թե ինչ զրբբերի պահանջ կա աշխտեղ, ինչ մակարդակ ունի աշխտեղ ընթերցողը: Նա պարզեց, վոր աշխտեղ քիչ զրբբ կա: Ընկեր Շուխինը զրույցի ժամանակ հարցնում է. «Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ է ՄՅՈՒԴ»-ը: Մի կոմունիստ նրան պատասխանում է. «ՄՅՈՒԴ-ը — դա մի խոսքով հեղափոխական տուն է»: Բայց թե ինչ է նշանակում ՄՅՈՒԴ խոսքն ինքը՝ չգիտեմ, ասում է:

Կամ վերցնենք մեր լրագրերը, աշխտեղ հաճախ և հանդիպում ձՏՍ խոսքը: Մեղ մտա գիտեն, վոր կրճատ աշխտես են անվանում հարտարադրտական — տեխնիկական աշխատողներին: Բայց ահա գլուցական կոմունիստը կարգում է ձՏՍ և չի իմանում, թե ինչ ասել է ձՏՍ: Լրագրերում աշխտեսի կրճատում կա՝ 4 կվ.: Ի՞նչ ասել է 4 կվ.: Գլուցական կոմունիստին, ասենք վոր միայն նրան, գժվար է գլխի ընկնել, վոր այս կրճատման տակ թագնված են 4-րդ կվարտալ բառերը: Յես սա չեմ ասում նրա համար, վոր ծիծաղենք մի մարդու վրա, վորը հատարակ բաներ չգիտե: Վոչ, ավելի շուտ հարկավոր է ծիծաղել նրանց վրա, ովքեր աշխտես են զրում բանվորներին ու գլուցացիներին համար»:

(Լ. ԿԱԳԱՆՈՎԻՉ. Կազմակերպչական հարցեր: Չեկուցում Համկ(բ)Կ 17-րդ համագումարում. Հայ կուսիստ, 1934 թ., էջ 118):

Կրճատ բառերը, բացի այն, վոր վոչ ամենքին են հասկանալի, հաճախ ուղղակի սպեղ են: Նրանք դուր չեն գալիս ընթերցողներին և հեռ են մղում նրանց թերթից: Այդ բառերը կարող են փշայնել լավ բովանդակութուն ունեցող թղթակցությունը:

Որինակ՝ «Կրաննի գաղտնիկ» կոլանտեսության պատի թերթում (Լենինգրադի մարզի Սկուլոյիսկի շրջ.) մի թղթակցություն և տեղավորվել կոմյերիտմիության աշխատանքի մասին: Թղթակցությունը վատը չէ, բայց նրան միայնել և «Կոմսոսրգանիդացիա» (հայերեն՝ կոմյեկազմակերպություն: — թարգ.) աններդաշնակի կրճատ բառի բազմաթիվ գործածությունը:

«... Կարճ ժամանակամիջոցում մեր կոմյեկազմակերպությունը ցույց տվեց իր կոմյերիտական դեմքը: Կոմյեկազմակերպության մեջ ընդամենը հինգ մարդ կա, վորոնցից չորսը պուլթիթակից են: Գյուլթիթակից ընկ. Ալեքսեյեվը կոմյեկազմակերպության կողմից կցված և պատի թերթին ոչնչու: Կոմյեկազմակերպությունն իր ամբողջ աշխատանքն ուղղել և կոլանտեսությանըն ուղնելուն...»:

Յեթև խորհույն այս թղթակցությունն ուղղելիս «կոմյեկազմակերպության» փոխարեն մի տեղ դրեր «կոմյերիտական կազմակերպություն», մի ուրիշ տեղ՝ «կոմյերիտականները», յերրորդ տեղը «կոմյերիտմիությունը», դրանից թղթակցությունը շատ բան կշահեր:

Իհարկե, վոչ վոք չի առարկում այն կրճատ բառերի դեմ, վորոնք հաստատորեն մտել են մեր ժողովրդի մեջ և նրանց նշանակությունը լիովին հասկանալի չե բոլորին: որինակ՝ «չրջկոմ», «գյուլթորհուրդ», «կոլանտեսություն» և այլն: Խոսքը վերաբերում և այն մտացածին կրճատումներին, վորոնք անհասկանալի չեն մնում և իր ժամանակին աչքան վրդովում և ին Լենինին:



ՊԱՅՔԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՎՈՋԻ ԴԵՄ

Հաճախ պատի թերթերի լեզուն փչանում, աղտոտվում և հիմնարկային ամփոփազրերից, զեկուցազրերից, հաշվապահական տեղեկանքներից փոխ առած արտահայտություններով: Դրա դեմ պետք և պայքարել: Խմբագրական կոլեկտիվ թղթակցութայինները պետք և խնամքով մտքի զրատենյակային արտահայտություններից ու դարձվածքներից:

Շատերի ելեկարոկայանի «Ելեկարոուղարնիկ» պատի թերթում աշայրխի մի արտահայտություն կար.

«Կձկող արճևատանոցը պետք և վերակառուցի իր աշխատանքը մոտոտների փորակական բացթողման հարցում, ստախանովյան չարժման ծախյուման հարցում, գոյություն ունեցող թերությունների վերացման հարցում»:

Ել չենք խոսում այն մասին, փոր այս նախագասությունն ընդհանրապես մի մեծ բովանդակություն չունի և ևյապես փոչինչ չի առում ընթերցողին: Ուշադրություն դարձնենք միայն այն բանի վրա, փոր աշատեղ յերեք անդամ գործածված և ինչ փոր մի հիմնարկային հաշվետվութայինց փոխ առած «հարցում» արտահայտությունը: Տեսեք, թե նույն նախագասությունը փորքան ավելի հասկանալի կդառնա, յեթե նրա միջից դուրս պցենք զրատենյակային արտահայտություն չոր ու յամաք ձևերը.

«Կձկող արճևատանոցը պետք և վերակառուցի իր աշխատանքը, փորպեպի լափորակ մոտոտներ արտադրի, ծախյի ստախանովյան չարժումը և վերացնի թերությունները»:

Նույն զրատենյակային փոճի աղղեցությունն և, յերբ փոխանակ գրելու՝ աշինչ ընկերը յեկել և Հողժողկոմատից, զրում են՝ աշինչ ընկերը յեկել և Հողժողկոմատի դժով, կամ՝ աշինչ ընկերը յեկել և Հողժողկոմատի կողմից:

Մեծ իմաստություն չի հարկավոր հասկանալու համար, փոր Հողժողկոմատը մարդիկ ուղարկելու համար հատուկ պժեր չունի: Պարզ և նաև այն, փոր Հողժողկոմատի կողմից պալը զեու չի նշանակում Հողժողկոմատից գալ:

Մի ուրիշ որինակ: Գրում են. «Գարնանացանի առաջին իսկ որերից պլուզկոտայն ապրանքը զաշտ չարտեց»: Հասկանալի չե, փոր ցանքի որերին գյուղկոտայն ապրանքը զաշտ և տարել, մոտեցրել և դնորդին և շատ լավ և արել: Բայց ինչու՞ զրպարտել գյուղկոտային, անելով, թե նա ապրանքը «չարտել» և և փոչ թե փոխադրել, տարել: Ձե՞ փոր «չարտած» ապրանքից շատ բան չի մնա:

Կամ վերցնենք բարձրագույն «մշակել» բառը: Գրում են՝
ա) Կուլթարչությունն իրենում մշակեցին ՄՏ կայանի խորհրդի վս-
տույնով՝ բերքատույնության բարձրացման մասին:

բ) Կոլտնտեսականների ընդհանուր ժողովում մշակած վորոշման
հիման վրա սրբապատկարություն վերցրին:

գ) Պատի թերթերի հեռակայող խմբագիրներն ու գյուղթղթակից-
ները լեզվի դասին մշակեցին մի առաջադրություն:

դ) Բրիգադը մշակեց Կենտկոմի վորոշումը:


ե) Անցյալ տարի կոլտնտեսությունը քսան հինգ հեկտար բամբակ
մշակեց:

Նկատում էք, թե միևնույն «մշակել» բառը քանի առումով և գոր-
ծածովում: Տեղի դեռ այս բնույթը չե, այդ բառը մեր պատի թերթե-
րում ուրիշ շատ առումներով էլ և գործածվում: Մինչդեռ մենք յու-
րաքանչյուր դեպքի համար առանձին բառ ունենք (ուսումնասիրել,
սովորել, քննել, ցանել և այլն): Բայց, ահա, Լենինը խուսափում էր
այդ բառից: Նա գրում էր.

«Արդյոք նախապատրաստված և հարցը, ուսումնասիրված
և, մտածված, կշռադատված և արդյոք այդ կողմից»:

(Լենին. Յերկիր, հատոր XXVI, էջ 74):

Ուշադրություն դարձրեք՝ «նախապատրաստված», «ուսումնա-
սիրված», «մտածված» և վերջ թե «մշակված»:



ՇՆՈՐՀՔՈՎ ՎԱՐՎԵԼ ԹՎԵՐԻ ՀԵՏ

Շատ պատի թերթեր ճիշտ չեն վարվում թվերի հետ :

Կան խմբագիրներ, վորոնք կարծում են, թե թղթակցութան մեջ վորքան շատ թվեր լինեն, այնքան թղթակցությունը համողիչ կլինի : Բայց բոլորովին հակառակն է գուրս գալիս. ընթերցողն ուղղակի հըրաժարվում է կարգալ ալըսիտի թղթակցությունը :

Իսկ ինչո՞ւ չե ալըսիտ : Խորհուրդների Համառուսական VIII համադումարում ասված իր գեկուցման մեջ ընկեր Լենինը շատ լավ է բացատրել այդ : Նա ասել է .

«Այդ դրքույիում, վոր բաժանված է ձեզ, — Պարենկովի յերեք տարվա հաշվետվության մեջ մի փոքրիկ աղյուսակ կա. վորից յե՞ս կկարդամ միայն հանրապետարի թվերը, այն էլ կյոթ թըվերով, վորովհետեւ թվեր կարգալը և մանավանդ լսելը դժվար է» :
(Լենին. Յերկեր, հատոր XXVI, էջ 39) :

Լենինը գտնում էր, վոր հարկավոր է իր ունկնդիրներին կլոր թվեր տալ : Ինչո՞ւ :

Վորովհետեւ կլոր թվերը շատ ավելի հեշտ է մտքում պահել :

Առանձնապես պետք է խոսել տոկոսների մասին : Համարյա միշտ, ասանց խմատին միաստ հասցնելու, իսկ ընթերցողին սղուտ ասալով, 50 տոկոս ասելու փոխարեն կարելի չե ասել «կեսը», կամ 250 տոկոսի փոխարեն՝ «յերկու և կես անգամ ավելի» :

«Վոլգերյոզ» պատի թերթում («Կրասնայա Նևիա» կորյունտեսութուն) տեղափորված էր այսպիսի մի արտահայտություն .

«Մեր կորյունտեսությունն ունի խողարածական Փերմա 48 դրուխ խողով, վորոնց 75 տոկոսը մատղաչներ են» :

Միթե ավելի պարզ չե՞ր լինի, յեթե ասանց տոկոսի սղնությանը գիմելու ասվեր .

«Մեր կորյունտեսության Փերմայում կա 48 խող, վորի յերեք քատորդը մատղաչներ են» :

Կամ ավելի պարզ՝

«...վորից 36-ը մատղաչներ են» :

Հասկանալի չե, պատի թերթում չպետք է տեղափորել այնպիսի բարդ թվական աղյուսակներ, վորոնցից ընթերցողների մեծ մասը դժվարությամբ բան կհասկանա :

Յերբ խմբիցը պատի թերթում ամփոփողը և տեղափորում, պետք է տալ միայն մի քանի ամենակարեւոր թվերը և այն էլ, անպայման, անհրաժեշտ բացատրություններով :

Ատկայն, չի կարելի նաեւ թերագնահատել թվերի նշանակությունը

նր: Մեր մամուլում թիվերը մեծ դեր են խաղում: Պատի թերթը կարգալիս կոլտնտեսականներն առաջին հերթին ամփոփազրի վրա յեն ուչազրություն դարձնում:


— Ապա, մի տեսնենք վո՞ր տեղն է բռնում մեր ողակը:

Լենինը շատ անգամ է նշել, վոր մեր կուսակցությունը բանվորին ու գյուղացուն պետք է համոզի վոչ թե քնդհանուր դատողություններով, վոչ թե բարձրագուրդ բաներով, այլ փաստերով ու թվերով:

Ինքը՝ Լենինը այս կամ այն յերևույթի արմատները բանալու համար բացառիկ շնորհքով էր ողտագործում թիվերը:

Թ՛վի մեջ, յեթև այն շնորհքով ցույց տրվի ու բացատրվի, համոզելու վիթխարի ուժ կա:

Այստեղից էլ յեղրակացություն. յուրաքանչյուր գյուղթղթակից, յուրաքանչյուր պատի թերթի խմբագիր պետք է կարողանա շնորհքով վարվել վոչ միայն խոսքերի, այլև թվական տվյալների հետ:



ՃԻՇՏ ԱՐՏԱՀԱՅՏԵՑԷՔ ՁԵՐ ՄԻՏԲԸ

Մեր լիզուն շատ հարուստ է. յուրաքանչյուր միտք, ամեն մի նրբութուն արտահայտելու համար հատուկ բառ կա: Յեւ յեթե դուք չեք ուզում ընթերցողներին մեջ դժգոհություն և նույնիսկ վրդովմունք առաջացնել, պետք է այնպես անեք, վոր յուրաքանչյուր բառն արտահայտի հենց այն, ինչ դուք եք ցանկանում ասել:

Թղթակցութունն ուղղելիս ինքդ քեզ հաճախ հարց պիտի տաս. արդյոք ա՞յն բառն է դորժածված, վոր այտեղ հարկավոր է: Ընթերցողները ճի՞շտ կհասկանան մեկ:

Դժբախտարար մի՛չ բոլոր խմբադիրներն են մտածում՝ դրա մասին: Ծառ հաճախ դորժ են ասում «մի՛չ այն բառը», վոր պետք է:

Այսպես, որինակ, Վորոշիլովի անվան կոլանտեսուցիան «Նոյի պուստ» պատի թերթը, նկարագրելով կարմիր անկյունում տիրող դժբությունը՝ գրում է.

«Անկյունում մարդիկ հավաքվում են, բայց այտեղ նրանք դրադիտւմ են այլանդակ դործով. ծխում են և սեմիչկա չըթում»: Այտեղ այն չի սոված, ինչ պետք էր ասել: Չէ՞ վոր ընդհանրապես միջ ծխելն է այլանդակ դործ, միջ արեւածաղկի սերմ ուտելը: Միայն կարմիր անկյունում այդ անել չի կարելի: Ուրեմն՝ այդ արտահայտութիւնը մոտափորապես այսպես կարելի չեր գրել:

«Անկյունում մարդիկ հավաքվում են, բայց դրանից ի՞նչ ուզուա. կան այնպիսի հաճախորդներ, վորոնք անկյունում ծխում են ու արեւածաղկի սերմ չըթում: Կարմիր անկյունում այդպես անելն այլանդակ բան է»:

Քիչ չեն պատահում այս կարգի արտահայտութիւններ.

«Ներածական ճառ տվեց ակումբի վարիչը»:

«Քիչ են ուշադրութիւն հատկացնում»:

«Կոմյերիտմիութիւնը գեկափար դեր է տակում»: Յեւ այն: Մինչդեռ ամեն մի գրադես ընթերցող կարող է խմբուին հիշեցնել, վոր ճառն ասում են կամ արտասանում, ուշադրութիւնը դարձնում են, դերը կատարում են կամ խաղում:

«Վարչութիւն անվութութիւն շնորհիվ, — գրում է պատի թերթերից մեկը, — կոլանտեսութիւնն առանց խտտի մնաց»: Մինչդեռ այտեղ շնորհքի բան չկա. հարկավոր էր գրել «Վարչութիւն անվութութիւն պատմառով կամ հետեւանգով»:

Ուրիշ բան է, յերբ պատի թերթը գրում է.

«Անասնապահ Մարտինի հոգատար խնամքի շնորհիվ հիվանդ կոյն առողջացավ»:

Այստեղ արդեն չնորճի բան կա և «չնորճի» բառը տեղին և դորճածված :

Նախադասութիւնն անտեղի բառերով խճողելու, ուրեմն և թղթ-թակցութեան միտքը մթապնելու հետևյալ դեպքերն ել քիչ չեն .

Գրում են

Փռխանակ գրելու

1) Սաղողի բերբահալաբը կատարված և :

1) Սաղողի բերբը հալաբ-ված և :

2) Բրիգադիրները բացակա-յութուն են տալիս :

2) Բրիգադիրները թացակա-յում են :

3) Ղեկավարները պարտա-վորութիւնն վերցրին :

3) Ղեկավարները պարտա-վորվեցին :

4) Կոմյերիտականները դպրո-ցի բակի կանաչադարդում անց-կացրին :

4) Կոմյերիտականները դպրոցի բակը կանաչադարդեցին :

5) Մտուրի յերեխաներն սպա-հովված են ամեն մեկը մի մահ ճակատով :

5) Մտուրի յերեխաներից յուրաքանչյուրը մի մահճակալ ունի :

6) Առաջարկութիւնն մտցրին պատի թերթ լույս ընծայելու մասին :

6) Առաջարկեցին պատի թերթ լույս ընծայել :

Միթե՞ պարզ չե, վոր բոլոր սրինակներն ել յերկրորդ ձևով ա-վելի հասկանալի յեն, քան առաջին ձևով :



ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲԱՌ ԻՐ ՏԵՂԸ

Պատի թերթերից մեկում այսպիսի մի արտահայտություն կար․

«Երբիցադիր Նիկոլայեվիչի հանցանքով այժմ տեղեկանքները հանձնման ուղացում չի լինում, ինչպես առաջ լինում էր»:

Ըստ յերևույթին թղթակիցը ցանկացել է ասել, վրբ առաջ այդ նույն բրիգադիր Նիկոլայեվիչի հանցանքով տեղեկանքներն ուղեկին հանձնվում հաշվադահությունը, իսկ հիմա այդպիսի բան չի լինում: Խմբիցը հեղինակին չի ոչնել՝ ճիշտ արտահայտելու իր միտքը, և ասա, զուրս է յեկել, վրբ թղթակիցը բրիգադիրին մեղադրում է տեղեկանքները ժամանակին հանձնելու համար: Այսպիսով մի վնասակար անհեթեթություն է ստացվել:

Ի՞նչ պետք էր անել այստեղ․ միայն բառերի տեղափոխություն, և ասա թե ինչ կստացվի:

«Այժմ տեղեկանքների հանձնման ուղացում չի լինում, ինչպես առաջ լինում էր բրիգադիր Նիկոլայեվիչի հանցանքով»:

Իհարկե, յեթե մի քիչ խորանաք, կտանենք, վրբ այսպես ել նախադասությունը հարակ չե․ «տեղեկանքների հանձնման ուղացում չի լինում» ասելու փոխարեն կարելի էր ասել՝ «տեղեկանքները չեն ուղացվում», «տեղեկանքներն ուղեկին հանձնվում» և այլն: Մակայն, այս ձևով, զոնե, բրիգադիրը չի մեղադրվում տեղեկանքները ժամանակին հանձնելու համար:

Այս մի փոքրիկ սրինակը ցույց է տալիս, վրբ բառերի դասափոխությունից ել շատ բան է կախված և թղթակցությունն ուղղելիս զրա վրա ել պետք է ուղղությունը դարձնել:

Բառերի սխալ դասափոխությունը յերբեմն կարող է շատ լուրջ սխալների մեջ զցել:

Այդ անթույլատրելի է:

Յուրաքանչյուր բաս իր տեղը պիտի դնել:



ԶՆՁԵՑԵՔ ԱՎԵԼՈՐԴ ԲԱՌԵՐԸ

Միայն և այն կարծիքը, թե յուրաքանչյուր ավելորդ բան, յուրաքանչյուր ավելորդ արտահայտություն ընթերցողին սպնում և ամփելի լավ հասկանալի հեղինակի միտքը: Դա ճիշտ չէ: Ավելորդ բաները միայն մթաղնում են հեղինակի միտքը և զժվարացնում՝ հասկանալը:

Ավելորդ բաներ պատի թերթերը քիչ չեն զործածում:

Ահա մի քանի որինակ.

1. «Պետք է նշել, վոր այն բրիկազներում, վորտեղ բրիկազի անդամների մեջ աշխատանքի ճիշտ բաշխում չի կատարվում...»:

2. «Ցեխի վարպետն անցավ իր իսկական գործնական աշխատանքին...»:

3. «Հինգ հոգի կոյնտեսական գնացին դաշտ...»:

Այս նույն որինակները կարգացեք առանց ընդգծած բառերի և կոտեսեք, վոր միտքը վոր միայն չի աղավաղվում, այլև պարզանում, դյուրբարձնելի չե դառնում: Ընդգծված բառերն ընթերցողին վոր մի նոր բան չեն առում. բացատրում են այն, ինչ ինքնբնութայն չան հասկանալի չէ: Այսպիսով, մեր բերած որինակների մեջ ընդգծված բառերն ավելորդ են և թղթակցությունն ուղղելիս պետք է դուրս գցվեն:

Համատացած ենք, վոր ընթերցողներից շատերն ստիպված են լինելու մի քանի անգամ կարդալ հետևյալ նախադասությունը, վորպեսզի հասկանան այն.

«Վերահիշյալ խանութավարները խանութային աշխատանքի սպարիզում լավագույն ցուցանիշների չեն հասել շնորհիվ դեպի սպասողը ցույց տված(ամենուրեք հապտատություն, ամենուրեք պահանջին պարանքների անընդմեջ հայթայթման ու անհամոզման, ստավելագույն ձկունություն ցուցաբերելով ապրանքները պահեստից խանութները տեղափոխելու զործում, խանութների աշխատանքի ժամերը սպասողի պահանջներին հարմարեցնելով»:

Յեթե նույն պատի թերթի խմբագրին առաջարկենք մի չնչում կարդալ այս նախադասությունը, նա կես ճանադարձին կանց կառնի ու կասի.

— Նեքեցեք, չունչս կորվում և, չեմ կարող:

Քյո ի՞նչ և նշանակում: Նշանակում է՝ այս նախադասությունը չառ և չերկար, վոր ընթերցողին հարկավոր է «չունչ քաշել»: Իսկ

դրա համար վերջակետ և հարկավոր: Ուրեմն՝ այսպիսի դեպքերում պետք և դիմել վերջակետի ոչնութեան. նախադասութիւնը պետք և վերակառուցել, մասերի բաժանել:

Տվյալ դեպքում այս նախադասութիւնը կարելի չէր այսպես ուղղել:

«Այս խնուփները լավ են աշխատում, փորովհետեւ վարիչները հոգատար են դիպի սպասույր: Նրանք ասանց ընդհատումներէ ապրանք են բերում պահեստներէ: Խնուփներէ աշխատանքի ժամերը հարմարեցրած են դնորդներէ պահանջներին»:

Այս թղթակցութիւնը պարզեցնելու մի ձևն է. նույնը կարելի չէր անել և ուրիշ ձևով:

Թղթակցութեան բովանդակութեանն ավելի հասկանալի դարձնելու համար պետք է հաճախ սկսել նոր պարբերութիւն: Վաս չի լինի յուրաքանչյուր նոր միտք սկսել նոր տողից, այսինքն՝ նոր պարբերութիւն դարձնել: Այդ ձևով թղթակցութեանն ավելի աշխույժ կլինի, կարգալը՝ ավելի հեշտ:

Տեսք, թե ընկեր Ստոյլինն ինչքան վարպետորեն և ուղտադործում համատու նախադասութիւններ կազմելու, հարցը սուր և պարզ զննելու, կարճ պարբերութիւններով արտահայտելու այդ ձևը:

«Կարլաճատերերի դասակարգը, ինչպես հայտնի չէ, արդեն վերացված էր քաղաքացիական պատերազմի հաղթական ավարտման հետևանքով: Ինչ վերաբերում է մյուս շահագործող դասակարգերին, ապա նրանց էլ բաժին ընկավ կարլաճատերերի դասակարգի բախտը: Չկա այլևս կապիտալիստներէ դասակարգն արդյունաբերութեան բնագավառում: Չկա այլևս կուլակներէ դասակարգը գյուղատնտեսութեան բնագավառում: Չկան այլևս վաճառականներն ու սպեկուլանտներն ապրանքաշրջանառութեան բնագավառում: Այսպիսով յոյսը շահագործող դասակարգերը վերացվեցին:

Մնաց բանվոր դասակարգը:

Մնաց գյուղացիներէ դասակարգը:

Մնաց ինտելիգենցիան»:

(Սոցիալիզմի համաժողովներու Ծրագրի արտակարգ համալուծումը ընդ. Ստոյլինի աված զեկուցումից):

Այս համատու նախադասութիւններէ մեջ ամենախոր մտքեր են դրված: Սրանք լիովին հաստատում են այն հայտնի կանոնը, թե՛ այնպես պիտի գրել, փոր բառերի տեղը նեղվածք լինի, իսկ մտքերը՝ նը՝ լայնարձակ:

ՄԵԶԲԵՐՈՒՄՆԵՐԸ ՃՅՏՈՒԹՅԱՄԲ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԵԼ

Հազիվ թե լինի մի թերթ, վորը մեջբերումներ չանի, այսինքն՝ հողիվածների, թղթակցությունների մեջ քաղվածքներ չբերի մեր առաջնորդների հողիվածներից ու ճառերից, թերթերից ու զանազան գրական յերկերից: Տեղին գործածած մեջբերումն աշխուժացնում է չարազդությունը, նրան տալիս և պատկերավորություն, ճշգրտություն, քաղաքական հաստիություն:

Վստան այն և միայն, վոր յերբեմն այդ արվում է անխուժորեն, քաղվածքի տեքստը, յերբեմն նույնիսկ իմաստն աղավաղելով: Կարիք կա՞նք, ասելու, վոր այդ անթույլատրելի, վնասակար բան է:

Մեջբերումը պետք է կատարել ճշտորեն, յերբեք հույս չդնել հիշողության վրա, այլ քաղվածքն անպայման ստուգել սկզբնական աղբյուրով:

Թերթը լույս բնծայելուց առաջ մի անգամ ևս պետք է ստուգել լեռնինից և Ստալինից վերցրած մեջբերումները, համեմատել նրանց սուղազիւր յերկերի հետ, վորպեսզի բաց թողնված չլինի վոչ մի կետ, վոչ մի ստորակետ, վոչ մի բառ:

Այս կանոնը չդահապանեք շատ ախուր հետևանք կարող է ունենալ: Պետք է զգան լինել: Հակառակ դեպքում աղավաղված մեջբերումով կարող ես ծառայած լինել դասակարգային թշնամուն, վնասարարին, հակահեղափոխականին:

Թղթակցության մեջ վորեւ տեղից մեջբերում անելիս հարկավոր է փակազծերի մեջ նշել աղբյուրը—այսինչ հեղինակի այսինչ յերկ, այսինչ էջ: Անշուշտ, դուք արդեն նկատել եք, վոր այս գրքում մենք ել սյուպես ենք անում:

Մի դիտողություն ևս. չի կարելի մեջբերվող նախադասությունից կտորներ վերցնել կամայական կերպով: Մեջբերումն այնպես պիտի կատարել, վոր հեղինակի միտքը բոլորովին չաղավաղվի:

ԱՏՈՒԳԻՉ ՀԱՐՅԵՐ

1. Ինչո՞ւ վ. Ի. Լենինն անհրաժեշտ էր համարում զրել պարզ ու հասկանալի: Նա ո՞ւմ չահերը նկատի ուներ:
2. Վորո՞նք են թղթակցությունն ուղղելու հիմնական կանոնները:
3. Ի՞նչ պահանջներն պիտի բավարարի լրագրացին լեզուն:
4. Թղթակցությունն ուղղելիս ի՞նչպես պիտի վարվել սուս րատերի հետ:
5. Վո՞ր կրճատ բառերն են թույլատրելի և վորո՞նք՝ վրջ:
6. Ի՞նչ է գրասենյակային մոճը:
7. Պատի թերթում ինչպե՞ս պիտի վարվել թվերի հետ:
8. Ի՞նչ նշանակություն ունի բառերի ձևա դասավորությունը:
9. Վո՞ր բառերն ենք համարում «ավելորդ բառեր»:
10. Ի՞նչ կանոններ պետք է պահպանել զանազան փաստաթղթերից — հեղինակների մեջբերումներ անելիս:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ուշադիր կարդացեք ձեր պատի թերթի վերջին համարը և ուղղեցեք այն ամենը, ինչ ձեր կարծիքով բաց թողած է յեղել սկզբնական ուղղման ժամանակ:
2. Ուղղեցեք մի գլուխթղթակցի թղթակցություն և ձեր ուղղումը ցույց տվեք հեղինակին: Հարցրեք, զո՞հ է նա ուղղումներից, ինչի՞ դեմ է առարկում և ինչո՞ւ:
3. Կորոնտոսության հաշվապահից վորևե ամփոփազլը վերցրեք և նրա նյութերի հիման վրա մի աշխույժ թղթակցություն զրեցեք:
4. Ձեր պատի թերթում զրեք մի յերկար նախադասություն և առանց իմաստին վնաս հասցնելու բաժանեցեք յերկու կամ յերեք նախադասության:
5. Պատի թերթի վերջին համարի համար գրած ձեր թղթակցությունից դուրս գցեցեք բոլոր ավելորդ բառերը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Թղթակցություններն ուղղելը պատասխանատու գործ է	3
2. Միշտ հիշել ընթերցողին	6
3. Ուղղել խնամքով, առանց աղբավազումների	8
4. Լավ, մաքուր, ժողովրդական լեզվի համար	12
5. Մի քիչ չարաշահի ոտար բառերի գործածությունը	16
6. Խուսափեցե՛ք կրնատ բառերից	18
7. Պայքար գրասենյակային վոնի դեմ	20
8. Շնորհքով վարվել քվերի հետ	22
9. Ճիշտ արտահայտեցե՛ք ձեր միտքը	24
10. Յուրաքանչյուր բառ իր տեղը	26
11. Ջնջեցե՛ք ավելորդ բառերը	27
12. Մեջբերումները հշտությամբ պիտի կատարել	29



Գլավիկա № 320 Գառվեր № 25, Տիրաժ 1500

Հանձնված է արտադրության 31 թայիսի 1937 թ.


Ստորագրված է սպաղարկու 1 հուլիսի 1937 թ.



ՀԱՆ Հիմնարար գիտ. գրադ



FL0003257



[094.]

ԴԱՍԱԻՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍՆՈՒՄ
 ՀԵՏԵՎՅԱԼ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Ռուսերեն
 Ռեկրախներեն
 Բեկտուսներեն
 Վրացերեն
 Հայերեն
 Ուրբեկերեն
 Գերմաներեն
 Ղաղախներեն
 Թաթարերեն
 Թուրքերեն

Ռսերեն
 Ձեչևներեն
 Բաշկերերեն
 Չուվաշերեն
 Մարերեն
 Մուլափերեն
 Ուղմուրաերեն
 Թուրքմեներեն
 Տաճիկերեն

С. Шефтель

Как править заметки

Издательство ЦК КП(б) А "Хорурдаин Айастан",
 Ереван 1937